դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք գործատուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի.

5) իրականացնել պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

7. Շահառուն պարտավորվում է՝

1) պայմանագրի կնքումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, գործատուին ներկայացնել աշխատանքի ընդունման համար Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը.

2) գործատուի հետ համաձայնեցված ժամկետում գործատուի մոտ ընդունվել աշխատանքի՝ առնվազն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով.

3) ձեռնարկել իրենից կախված անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ պայմանագրի 2-րդ կետի 1-ին ենթակետով նշված մասնագետի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման նպատակով.

4) պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետից շուտ աշխատանքից ազատվելու դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել տարածքային կենտրոնին՝ ոչ ուշ, քան աշխատանքից ազատվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում.

8. Շահառուն իրավունք ունի՝

1) տարածքային կենտրոնից պահանջել տրամադրել համապատասխան խորհրդատվություն՝ աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրմանն առնչվող հարցերի, դրանց շրջանակներում գործատուի և շահառուի իրավունքների և պարտականությունների վերաբերյալ.

2) գործատուից պահանջել, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան, շահառուին ընդունել աշխատանքի՝ առնվազն պայմանագրի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետով և պատշաճ կերպով կազմակերպել շահառուի աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը.

3) տարածքային կենտրոնից պահանջել չհրապարակել կամ երրորդ անձանց որևէ կերպ հասանելի չդարձնել պայմանագրի կատարման ընթացքում տարածքային կենտրոնին հայտնի դարձած այն տեղեկությունները և տվյալները, որոնք շահառուի համար կրում են գաղտնի բնույթ և որոնց մասին տարածքային կենտրոնը տեղեկացվել է նախապես՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի.

4) գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում շահառուի համար ապահովել աշխատանքային բնականոն պայմաններ.

5) գործատուից պահանջել աշխատանքային հարաբերությունների ողջ ժամանակահատվածում չվատթարացնել շահառուի աշխատանքի էական պայմանները կամ շահառուի համար չսահմանել առավել նվազ բարենպաստ պայմաններ այն պայմանների համեմատ, որոնք նախատեսվելու են աշխատանքային պայմանագրով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերի.

6) իրականացնել պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված այլ իրավունքներ:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Պայմանագրի համաձայն գործատուին վճարվող դրամական միջոցները նախատեսված են՝

1) **100 հազ. դրամի չափով շահառուին** ամսական աշխատավարձ վճարելու համար՝ առանց աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկի, դրոշմանիշային վճարի և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարի.

2) շահառուի աշխատավարձից հաշվարկվող **եկամտային հարկը, դրոշմանիշային վճարը** և օրենքով սահմանված դեպքերում՝ **սոցիալական վճարը** փոխհատուցելու համար.

3) գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին ամսական կտրվածքով **34 հազ. դրամի** չափով գումար վճարելու համար:

10. Պայմանագրի 9-րդ կետում նշված դրամական միջոցները գործատուին են վճարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 2118-Լ որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված չափով, կարգով և ժամկետներում: